

Թերթ կը ղրկուի կանխիկ վճարողներու միայն:

ԲԱՅՆԵԳԻՆ

ՊԱՅՄԱՆՔ

Պարբերիկ
8 հ. 10 ֆր.

1 հ. 5 ֆր.

Արտագնա՝ 5 ֆր.

Տարեկ. 12 ֆր.

Վեցամս. 6 ֆր.

Ամսական

2 Տղ. 30 անգ.

ԿԱՆԻՒԿ



Գրութիւնք եւ
չեն տրուիր:

Հասցէ

DIBAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՅԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

ОТГОВОРНИКЪ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

Ե. ՏԱՐԻ

ՓԵՏՐ. 16 ՇԱՐԱԹ 1902

ԹԻԻ 240

ԱՆՓՈՅԹՆԵՐՈՒՆ

Անցեալ դեկտեմբեր 31ին պայմաւորաբար յիշուող 50ի մօտ բաժանորդաց ընկալագիրները բարեկամաց, գործակալաց եւ կամ յանձնակատարաց միջոցաւ ղրկած էինք, բայց մինչեւ ցարգ անոնցմէ միայն 8ը վճարած ըլլալով, մնացեալք՝ «քիչ օրէն կը վճարենք», «պիտի ղրկենք», «միտքերնիս է» պատասխանելով տակաւին անփոյթ կը գտնուին.

Թերթի մը հրատարակութիւնը ծախքերու կարօտ ըլլալով, եւ անոր խմբագիրը կալուածատէր կամ պանդէր չըլլալուն պատճառաւ, խոհական ընթերցողը կրնայ ելեւակայել թէ իրն կը քաշէ այն խմբագիրը որ տագին անգին 100 աւոր ֆրանքներ պահանջ ունենալով հանգերձ, չի կրնար սակայն թերթին առօրեայ անփշական պէտքերը հոգալու: Այս պատճառաւ երբեմն թերթին հրատարակութիւնը մէկ երկու օր ակամայ կուշացնէ, որով պարտաճանաչ բաժանորդներու արդարացի դատողութեանցը տեղի կուտայ: Զարմանալին սա է որ չի վճարողներն ալ միեւնոյն գիտողութիւնը կրնեն չի հրատարակուելուն դէմ. . .

Մենք չկրնալով մէկուն պէս տևտրակը թելերնու տակ առած քաղքէ քաղքէ, գիւղէ գիւղ պտտելով բաժնեգին հաւաքելու, որ աւելորդ ծախքերու դուռ մը բանալէ զատ, խմբագրի մը համար խիստ անվայել բան մ'է, անցեալ տարի դադարեցուցած էինք կարգ մը քաղքիսիւղ բաժանորդաց թերթերը, որով 400 ֆրանքի բաց մը ունեցանք, այս բացը մեր համեստ պիւտ-

ճէին համար մեծ բան էր. նոյն վիճակին մէջ կը գտնուինք այսօր ալ, վիճակ մը որ կապառնայ թերթիս կանոնաւոր հրատարակութիւնը խանգարելու.

Մենք չենք կրնար նաեւ գաճուելիք բաժնեգիրներու վստահելով պարտք ընել եւ թերթը հրատարակել. վասն զի տեսած ենք այդ կարգի խմբագիրներուն ունեցած վերջին յուսախաբ վիճակը.

Աւստի կը խնդրենք վերոյիշեալ բաժանորդներէն որ այլեւս բարեհաճին բաժնեգիրը վճարելու, նկատելով որ տարեգլուխէն ի վեր երկու ամիսներ անցած են, եւ թէ իրենց վճարմամբը կարելի պիտի ըլլայ պիւտճէնիս հաւաստիակշռելով կանոնաւորապէս հատարակել «Հայերի» որ արտասահմանի մէջ 5 տարիներէ ի վեր իր գոյութիւնը պահող ընկերական եւ ընտանեկան միակ թերթն է.

ՄԵԾ ՊԱՐԱԶԱՆԴԵՍ

Դիմակաւոր եւ սևդիմակ

Սանդրալի սրահին մէջ

Ի ՆՊԱՍՏ ՏԵՂԻՊՅՈ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

1902 Փետրւար 18 երկուշաբթի գիշեր

Մտից ամսակի գինն է 5 ֆրանք

Կարգադրի Թանձնախմբին կողմէ ամեն նախահոգ միջոցներ ձեռք առնուած են թէ՛ երեկոյթին փայլունութեանը եւ թէ՛ հանդիսականաց հանգստութեանը համար:

Հրատարակելու համար Լոնտոնէն մեզի ալ շրկուած հետեւեալ Կոչը հաճութեամբ կ'արտատպենք, մաղթելով որ իր փրկարար ազդեցութիւնը ունենայ, մանաւանդ այն կարգ մը Լոնտոնեան և Բարիզեան պարոններուն վրայ՝ որոնք առենէ մը ի վեր Կրական ասպարէզի մաքուր մթնոլորտը կ'աղտոտեն:

ՀՐԱԽԷՐ ԶԻՆԱԴՈՒԼԻ

ՀԱՏԵՐՈՒՆ ուշագրութենէն վրիպած ըլլալու չէ թէ փճաբանութեանց և քննադատութեանց առթիւ մեր արտասահմանի գրիներու և գործիչներու մէկ մասին գործածած լեզուն ու ոճը իրենց օրինաւոր սահմանէն դուրս ելլելով, ոչ քաղաքավարական կանոնաց կը համապատասխանէ եւ ոչ ալ հայ հրապարակագրութեան պատիւ կը բերէ: Իբր նմոյշ մի բանի օրինակներ մէջ բերեմ ի յիշողութենէ, առանց անոնց հեղինակները եւլն փնտելու: Զոր օրինակ՝ ասոնք ղիրար կը կոչեն խորեբայ, նրբացեալ սրիկայ, մատնիչ, դաւադիր, վարձկան, պապուկ, խաչագող, բաղդախնդիր, յորովայնէ ընտրեալ ապուշ, մետաղ, կեծաւոր, շուն, ականի մուկէն ալ վար... և նաև իրենց գրութեանց կոչած են. Հայհոյութիւն, լուտանք, անամոթ սող, մարգկային կղզանք, խայտառակութիւն, ստութիւն, վատութիւն, փտութիւն, անանուանելի լրբութիւն, ամենէն ցած՝ ամենէն ջլթիկ էջ, լղրճուկ բան...:

1. Հատ տեսակէտերով ասիկա ցաւալի և աղիտաբեր ուղղութիւն մընէ: Նախ՝ որովհետև ասանկ զիրար անարգել, նախատիլ, անպատուել, անուանարկել, աղտոցել եւ վիրաւորելով իրենց և հրապարակագրութեան վարկը կը նսեմացնեն մեր մէջ, իբեք ծանօթ գրիչներ և շառերէն յարգուած անձնաւորութիւններ ըլլալնուն, արտասահման անցնիլ և մնալ դատապարտուած են: Եթէ իրենք ղիրար այդպէս վարկաբեկ ընեն, հասարակութիւնը ալ աւելի դիւրաւ թէ՛ ղիրենք, թէ՛ իրենց պէսները և թէ հրապարակագրութիւնը և գրականութիւնը՝ ընդհանրապէս խօսելով՝ կանարգեն: Այսու կարող և հեղինակաւոր անձանց եւ իրենց գըրածներու հանդէպ ակնածանք, սէր համակրութիւն չի մնար, և նոցա լաւագոյն էջերն իսկ՝ իրենց փրկարար, ազնուացուցիչ ազդեցութիւնն ընելու կոռուան մը եւ պատրաստ հող չեն գտներ:

2. Բայց ասկէ յառաջ եկող մեքագոյն մնասը սա է որ քրեյու այս լեզուն ու ոճը իրեն նորութեամբ եւ հրապարակի կոյժով համաճարակի նման՝ երթալով հանրանալ և մեր բարբերուն մէջ մտնելով հաստատուիլ եւ գրական նոր տեսակ մը դառնալու վրայ է: Եւ այս կըլլայ մաս մը գրողներուն հեղինակաւորութիւնէն ազդուելով անոնց նմանելու հրապարակէն ձգուած, մաս մըն ալ շնորհիւ այն ընդունելութեան զոր գուցէ երբեմն

կոյժեր կը գտնէ այս լեզուն: Քանզի անհաւանական չէ որ դաս մը ընթերցողք ախորժին և հաճոյք զգան այս յախուռն ձեւերէն: Սակայն ասիկա պատճառ մ'ըլլալու չէ բնաւ անոնց ճաշակին ստորնանալու, փոխանակ շանոնք իրենցինին բարձրացնել ջանալու:

3. Քննադատելու և վիճելու այս եղանակին մատագ մտքերու վրայ ըրած աւերիչ ազդեցութիւնն ալ զանց ըլլուելիք պզտիկ կէտ մը չէ, եւ որուն ես իմ անձնական զննութենէս կրնամ վկայել: Այս օրուան ուսանողները մեր վաղուան գրողները պիտի ըլլան: Այսօր անոնք կազմ ու պատրաստ կը կենան, համակ ջղային, օրուան գրիչներու ձեւերն ու լեզուն ընդունելու անոնց հետեւիլ եւ նմանելու: Ու երբ անոնք ձեռք առնելով օրուան ծանօթ ու յարգելի կարող գրական անձ մը, առանց յարգանաց կամ ակնածանքի՝ կեկսին դատափետիլ, անուանարկել (գաւառական ոճով միտք ծածկել). նոյն իսկ այն ոճով որ կը կարգան թերթերու մէջ, լսողին սիրտը չի դիմանար: Բայց ո՞վ է պատասխանատուն եւ յանցաւորը՝ ո՞ր է աշակերտ առաւել քան զվարդապետ իւրո:

Ահաւասիկ այս անուանալի իրողութեանց վրայ յենելով է որ կը համարձակիմ, առանց ամենեւին տեղէ մը, անձէ մը կամ կուսակցութենէ մը. — պաշտօն ստանալու, հրաւեր կարգալ արտասահմանի մէջ գրական ասպարէզի վրայ գործողներուն, որ այս մասին ԶԻՆԱԴՈՒԼ մընեն: Թերեւս մտութիւնը չունիմ առաջարկելու որ միանան եւ ի միասին, կամ միեւնոյն հասկացողութեամբ գործեն, եւ ո՛չ իսկ իրարու նկատմամբ տածած զգացումներն կամ գաղափարներն փոխել կառաջարկեմ. իմ առաջարկս միայն լեզուի բառի եւ ոճի ղեկքերու զինարար է. քննադատութիւննիս եւ վիճաբանութիւննիս իրենց օրինաւոր սահմանին մէջ թող ըլլան, ազնիւ և յարգալից ոճով, քաղաքավարական կանոնաց համաձայն, յարգելով դիմացինին խօսքը եւ ըզգացումը: Քաղաքակիրթ ազգաց վիճելու կամ քննադատելու փափկանկատ և քաղաքավար կերպերը ուսուցանան իրենք և օրինակենք, որոնց մէջ ակնարկուած ոճով բնաւորութիւն տեսած ըլլալս չեմ յիշեր:

Մեր գրական անձանց ամենէն ակնիւ զգացումներուն կոչում կընեմ, ի սէր իրենց շահերուն, յանուն ազգային արդար գատին, որուն կը նուիրեն իրենց գըրիչները, թող մեր ազգային գրականութեան մէջ չի ներմուծեն քրեյու այս աղտոտ և անազնիւ կիրպըլ: Թող իրենց խօսքին սլաքները խփելու վերածեն հայ մտքին ու սրտերը մշակելու:

ԿՈՉՈՒՄ կընեմ նաև ընդհանուր հայ հասարակութեան, որ չի բաջալերին մեր յարգելի հրապարակագիրները այս ուղղութեան մէջ, թող չի կարգան այսպիսի գրութեանք և հրապարակաւ ալ պախտրակեն, գատապարտեն անոր գործածութիւնը:

Վերջացնելէս առաջ հարկ կըգամ ըսել որ այս տո-

ղերը ո՛ր եւ է մէկ անձնաւորութեան դէմ ուղղուող շնչ, ոչ ալ անոնցմէ մին միւսներէն աւելի աչքիս առջեւ ունեցած եմ, կամ ո՛ր եւ է մէկը վիրաւորելու խորհուրդը մտքս անցած է: Ամենքն ալ իբր ազգիս մտաւոր դարագացման ժիր մշակները ճանչնալ եւ յարգելու համար է որ իրենց անունը շարաշար գործածելու այս կերպը կը գայթակղեցնէ զիս եւ դարման մը առաջարկել կը փորձեմ: Եթէ առաջարկութիւնս ընդունուի իրենցմէ եւ հասարակութենէն, ինքզինքս երջանիկ կը համարիմ, իսկ եթէ չընդունուի կամ մինչեւ իսկ խեղաթիւրուի, դեռ զինադուրի ժամանակը չէ հասեր ըսելով լաւագոյն օրերու կ'սպասեմ:

Լ. ԹՈՒՄԱՆԱՆ

—Հրատարակուեցաւ ԲԱՆԱՍԷՐ գրական և գիտական պատկերազարդ օգտաշատ ամսական թի Յունվարի պրակը. շահեկան բովանդակութեամբ: Տարեկան բաժնեդիրն է 15 ֆր. կանխիկ: Հասցէն է.

ՊԱՍՏԱՃԵԱՆ

112, Պուրջառ Ռօշըշուառ Բաւիզ

ԺԻՒԼ ՎԵՐՆ

Փրանսայի վիպասաններէն տիեզերահռչակ Ժիւլ Վէրն ներկայ փետր. 12 (ը. ե.) երեքշաբթի օրը 74 տարեկան եղած է: Յարգելի ծերունին՝ «Հինգ շաբաթ օդապարիկով», «20,000 փարսախ ծովերուն տակ» և «Լուսնին շուրջը» անուն երկերը գրած ատենին ունեցած մտքի դարմութիւնը տալաւին պահած է: Անցեալները Ամերիկեան թերթի մը թղթակցին հետ տեսնուած ատեն ըսեր է որ՝ «20րդ դարը 19րդ դարէն աւելի հաշքներ պիտի գործէ: Մարդիկ 2-300 փարսախ տեղը պիտի կրնան կտրել անցնիլ մէկ ժամուան մէջ. ժամանակ պիտի գայ որ իբր զբօսանք Ովկիանոսներու տակէն պիտի ճամբորդեն: ասկէ ետքը շոգեկառքերու երթևեկը աւելի արագ ընելու համար ծուռումուռ ճամբաներ չպիտի գործածուին: Մինչև հիմա կեանքս կարգ մը իրականացի բաներու երազներովը անցուցած եմ, կ'զգամ թէ այդ բաները պիտի կատարուին 20րդ դարուն մէջ, բայց մտածելով որ այս աշխարհէ մեկնելուս ժամանակը հետզհետէ կը մօտենայ, այս պատճառաւ շատ տխուր եմ»:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

Ամանս Բոժոժիկ եւ Ընկ.

Փրանսա

Հին և նոր հնչակեանք միանալու համար պատգամաւորաց ժողով գումարեցին, բայց «ի-

բի ճամպազ պիտի իբտէ օյնայամազ» ըսելով չի միացան եւ իրարմէ բաժնուեցան, վրայ տալով շոգեկառքի, շոգեկառքի, բայթօններու, հօթէլներու, դարեջրատուներու և այլ ծախսերը որոնք խեղճ հայ ժողովրդին քսակէն ելած են յանուն փրկութեան գործին:

Մ. Կ.

Մանչեսթր

Օրոցի հայ նորածինները իմանալով որ իրենց «պատանի» աղբարիկները թերթ մը հիմնած են, որոշեցին իրենք ալ մանկական թերթ մը հիմնել «Պիպէռօն» անունով:

Պոսդըն

Մաշթոց վարդապետ իր... փորեշահ քարոզութիւնները կը շարունակէ, բնաբան ընտրելով սա խօսքերը. «Որ սեղանոյն պաշտօնեայ է, ի սեղանոյ անտի վայելէ»:

Բոժ. —Աղէկ ամա, հայր սուրբ, աբ. սեղանէն վայելուն ալ չէնքով շնորհքով գործ մը տեսնուլու է:

Ռոթթ

Պ. Ա. Ռշտունի ալ կը պտտրաստուի երկրորդել իր... փորեշահ ատենախօսութիւնը. բընաբան ընտրելով սա խօսքերը. «Անթի կաքաւէ չի կրնար խաղալ»:

Բոժ. —Աղէկ ամա, տէր ատենաբան, աղկշտացող կաքաւէն ալ թուլնալով աբիմեւելքի պէս տարիներով խռկալու չէ:

Շումէն

Գոյութեան յանցանքով Սինոպի բանտը նետուած ու անկէ փախչելով Պուլկարիա ապաստանած առաւ փախաւ մը որ մէկ երկու քաղաքներու մէջ ինքզինքը հերոս. հայսենեայ պաշտպան և այլն հռչակելով կարգ մը միամիտներէ բաւական դրամ չորթեր և անոնցմէ մէկ քանիին անկողին, վերմակ ու հանդերձեղէններն ալ գոյնալով ծախելէ ետքը ինքզինքը Շումնու նետած էր, սրճարանի մը մէջ ճառախօսելու պահուն ձերբակալուելով Վառնայի կեդրոնական բանտը փոխադրուեցաւ, իր հերոսութեան յաղթանակը հօն վայելելու համար:

Քամչաթքա

Չաքալ ախալ առտանգաշրիկը հարցման մը պատասխանելով բաւ թէ, այն ատեն կրնայ ազատ թողուլ իր զաւոյթ բրած ւսուցչուհին, երբ հօթէլին ունեցած 70 ֆր. պալտքերնին իր ձեռքը համրուի. ապա թէ ոչ՝ «էօլիւմ վար ալըըլդ եօզ»:

Սոյն հեռագրին մէկ օրինակը զրկուեցաւ Մարիճա գետի հետաքրքիրին:

ՓՈՒՆՋ

Գեղեցիկ կիներու սրտերը, ամանորի շաբաթներու պէս՝ բաղդի թուղթերով փաթառուած են:

Կեանքի տեղութեան մէջ տեսնուելիք կարևոր գործերէն մին ալ կնոջ մը ընտրութիւնն է:

Կնոջ մը սիրտը բնաւ չծերանար, այն տան միայն կը դադրի սիրելէ, երբ իր զգայնութիւնը կը կորսնցնէ:

Ամուսնացած կնոջ մը սիրտը արգելքի տակ առնուած ապրանք մըն է:

Անբոռոյական կնոջ մը սիրտը կը նմանի վարդի մը՝ որուն ամէն մէկ թերթը սիրահար մը կը փրցնէ, կը տանի, փուշը միայն ձգելով բուն ամուսնոյն:

Կիներու փափաքները ծնեքեկի (գուշ Գօն մալ) կը նմանին, քանի կտրտուին, այնքան կ'աճին:

Կիները իրենցմէ աւելի մեծ թշնամի չունին:

Ձեր չուզածը ուզել և ձեր ուզածը չուզել՝ ահա կիներու բնաւորութիւնը:

Կնոջ մը սուտիկակ ցաւկաւոր
Նիսկաւայի ջրվեժին մէջ:

Մօտերս ամերիկեան թերթերը հետեւալը կը պատմեն:

Ամերիկացի 47 տարեկան այրի կին մը, տիկին Աննա Թէյլըր, որ նիւթական անձուկ վիճակի մը մատնուած էր, կը մտադրէ տարօրինակ արարքով մը համբաւ ստանալ և — հետեւեալը — գրամական յաջողութիւն մը ձեռք բերել: Ուտի հրապարակաւ կը յայտնէ թէ որոշած է նիսկաւոր գետին շրվեթէն անցնիլ մասնաւոր տակառի մը մէջ ամփոփելով իր անձը: Ասիկա շատ մեծ յանդգնութիւն մըն էր և ոմանք կը համոզեն թէ ետ կենայ այդ պաղտաբէն որ զինքը հարիւրին 99 մահուան ճիրաններուն կ'ենթարկէր: Բայց տիկին Թէյլըր անխախտ կը կենայ իր որոշմանը մէջ: Ուրեմն՝ ալ և ձախէն հաւաքած դրամական օգնութիւններուն շնորհիւ, տիկին Թէյլըր՝ ուսումնասիրած մասնաւոր տակառը շինել կուտայ իր հակողութեան ներքեւ:

Այդ տակառին մէջ որ համեմատաբար ըն-

դարձակ էր, տիկին Թէյլըր ոտքի վրայ պիտի կենար և որովհետեւ ընելիք տարօրինակ ճամբորդութեանը մէջ տարակոյտ չի կար թէ ցնցումներու պիտի ենթարկուէր, գլխուն, կուրծքին և կռնակին կողմերուն դիմացը՝ տակառին մէջ բարձեր հաստատել կուտայ: Վերջապէս տիկինը այդ տակառին մէջ գիւրաբեկ առարկայի մը պէս խնախօք ծրարուած պիտի ըլլար: Տակառին վարի կողմը կապարի փոքրիկ կոյտեր հաստատուած էին իւր ծանրութիւնը որպէս զի տակառը միշտ ուղղահայեաց դիրքով մը կենայ շուրին մէջ — հսկի եւ արմազի պէս — և այսպէսով մէջի ճամբորդին ոտքի վրայ կեցած դիրքը անփոփոխ մնայ: Շնչառութեան համար պէտք եղած միջոցները գործադրուած էին: Ձերկարենք, որոշեալ օրը, տիկին Թէյլըր ուրախութեամբ կը մտնէ իր տակառին մէջ — որ Գիտգինէսի տակառին չէր նմանէր: Կափարիչը գոցելով պէտք եղած օդը կը ճնշեն մէջը որմէ յետոյ տակառը կը յանձնեն շուրին հասանքին որ կառնէ կը տանի զայն: Պէտք եղած հաշիւները նախապէս կատարուած էին որպէս զի տակառը գետին մէջ տեղէն երթալ, փոխանակ եզերքներէն ուր ժայռեւուն բարեւրով կրնար ընկղմիլ: Հանգիստեաներ սրտատրոփ կը դիտեն տակառին ճամբորդութիւնը որ կը հասնի վերջապէս շրվեթին բերանը որ 50 մեթր բարձրութիւն ունի: Տակառը կիյնայ պահալէթին մէջ: Այս մասին ահաւասիկ տիկին Թէյլըրի պատմածը:

«Երբ հասայ շրվեթին բերանը, կըսէ, զգացի թէ վար կ'իյնամ կոր: անդունդի մը մէջ և աշուրներս գոցեցի: Ինքզինք, բռնեցի գահավէթին ոտանալիք հարուածիս դիմադրելու համար: Մէկ քանի վայրկեան ցնորեցայ, չվախցայ ոսկայն, խելքս՝ զլուխս չը մնաց: յիշողութիւնս կորսնցուցի: Երբ վերստին զգայնութիւնս ձեռք բերի, հասկցայ որ շրվեթին վարի կողմը կը դուռնուէր:»

Հանգիստեաններուն վկայութեամբ՝ տակառը կայծակնահա՝ արագութեամբ գահավէթին մէջ իյնալով՝ նախ կ'անհետանայ եւացող փրփուրի մեծ ամպի մը մէջ, հէտ վայրկեան յետոյ շուրին երեսը կելլայ և մինչև 60 մէթր հեռաւորութեամբ ճամբան շարունակելէ յետոյ, օդնութեան կը հասնին իրեն: Անմիջապէս տակառին վարի մասը սղոցով մը կը կտրեն և մեծ զարմանք ուղղ կը գտնեն տիկին Թէյլըրը որ քիչ ժամանակէն իր առողջութիւնը կը գտնայ: Այս տարօրինակ ճամբորդութիւնը ճիշդ 17 վայրկեան կը տեւէ:

ԶԱՐԲԱՆԱԼԻ ԿՂԶԻ ՄԻ

Ուկրաինայի թանկա կղզիներուն մէջ կը գտնուի կղզի մը որ 15 տարիէ ի վեր փոխն ի փոխն Անգլիոյ, Գալիոյ և տեղական կառավարութեան մը իշխանութեանը տակ մտեր ելեր է՝ առանց սակայն պատերազմներու և դիւանագիտական բանակցութիւններու դուռ բանալու:

1889ին Անգլիայի կը տիրեն նոյն կղզիին որ այն ատեն 50 մէթր բարձր էր ծովէն, և որ ժայռոտ ըլլալովն հանդերձ, արմաւենիներ և տաք երկիրներու յատուկ պտուղներու ծառեր ունէր: Երկու տարի անցնելէ ետքը կղզին կ'սկսի կամաց կամաց անհետանալ և հազիւ ծովին մակերեսին վրայ պզտիկ ժայռի մը չափ երեւնալ: 1892ին փոխանակ բոլորովին կորսուելու, իր ամբողջութեամբը նորէն կը բարձրանայ, այնպէս որ գաղական դիւանագիտական մը որ մօտէն կանցնէր, ծովէն 12 մէթր բարձրութիւն ունեցող սոյն անտէր կղզիին վրայ ֆրանսական դիւանագիտական պարզէ:

Սակայն այս վիճակն ալ շատ քշեր: 1894ի ապրիլին կղզիին հետքն անգամ մնացած չէր, իսկ երկու տարի ետքը կղզին դարձեալ երևան կելլէ զոր անկէց ի վեր թոնկայի կղզեաց իշխանը իր երկիրներուն միացուցեր է:

ԱԼԱՖՐԱՆԿԱՅԻ ՎԼԱՍՆԵՐԸ

— Բարակ պլուզով պատիլ թուալէթ ցուցնելու համար:

Յետոյ քոնեաքով մարմինը շփել տարնալու համար:

— Եղունգները երկարել նորաձեւութեան համար:

Բանէ գործէ ետ մնալ անոնց մէջերը մաքրելու համար:

— Տղաքներուն սրունքները բաց ձգել նույնի համար:

Յետոյ անոնց անկողինին մօտ հսկել զանոնք առողջացնելու համար:

— Փուճ տեղը ակնոց դնել նորութեան համար:

Յետոյ տոբթորին վազել ապաքինելու համար:

Նեղ գոշիկ հագնել այս մօտ երևնալու համար:

Յետոյ կոշտեղով զբաղել տաք լորայ կենալու համար:

— Փանէլա չհագնել զաղիակներն ի պատիւ:

Յետոյ անկողին պառկել բժիշկին ի պատիւ:

— Եւրոպական թերթեր բռնել նորութեան համար:

Յետոյ մէջը բանտին փախտել կարգաւ չը գիտնալուն համար:

ԱՍՏՂ

ԵՐԶՆԿԱՅԻ ՍԱՅԼԱՊԱՆԻՆ ԵՐԳԸ

(Ռամկակաւ)

Եղ կը քշիմ եզին քովէն

Մասսան միւթիմ երկու կողէն:

Մօ՛ պուտա եզին բօշիկի տիր:

Մօ՛ պուտա կովըն պուլիկի տիր:

Գեղ մը կերթամ գեղին քովէն

Կաթ կը կթեմ գեղին կովէն:

Մօ՛ պուտա կաթըն մածունը տըր:

Մօ՛ պուտա թանըն այրանը տըր:

Հաւ կը մորթիմ խազին վըրան

Խազ կը մորթիմ սազին վըրան:

Մօ՛ պուտա խազըն մօռ քիթի տիր:

Մօ՛ պուտա հաւըն հաւկիթի տիր:

Խուշ թըռցունիմ խուշին քովէն

Խուշն ու պիւլպիւլ շատ կը գովեն:

Մօ՛ պուտա վարդըն պիւլպիւլի տիր:

Մօ՛ պուտա խուշըն զիւմպիւլի տիր:

Հարս կը բերեմ հարսին քովէն

Պագ մը կառնեմ թուշին տակէն:

Մօ՛ պուտա փեփին հէլվաւ տըր:

Մօ՛ պուտա հարսըն ճիւղէոի տիր:


Բուրգ կը խուզիմ մեր ոչխարէն

Պուճ կը կործիմ բարակ թելէն:

Մօ՛ պուտա պէնիմ օրուան իշիմ:

Հօ՛ ըսելով սայլ կը քշիմ:

Հաւաքիլ Մ.



— Կուտրձուլիք, ֆրանք մը կ'ուզեմ.
 — Հիմա գետինը կանցունեմ քեզ, ֆրանքը
 ի՞նչ պիտի ընես.
 — Անպատճառ պիտի տաս մայրիկ.
 — Չպիտի տամ.
 — Տուր՝ կըսեմ քեզի իմ սիրուն, նոնօխ
 մայրիկս.
 — Գարշելի տղայ, չպիտի տամ, չպիտի տամ.
 — Չպիտի տամ մի, էհ, դուն գիտես, ես
 ալ այս իրիկունէ թէզը չեկայ, հայրիկիս իմաց
 պիտի տամ քի միւսիւ . . . իշթէ ես կերթամ
 կոր.
 — Եկու՛ր Ջենօփս, մի՛ երթար, եկու՛ր տամ.
 ես չախա ըրի. հիչ ես իմ անուշիկ, սիրունիկ
 զաւակս ֆրանքի մը կը փոխեմ . . .

Կուտրձուլի աղան իր կնոջ յուզարկաւորութե-
 նէն վերադարձին սպասուհին սենեակին մէջ մի-
 նակ գտնելով, կսկսի դարպաստ ընել և այն աս-
 տիճան նեղը կը ձգէ խեղճ աղջկը որ կը պար-
 տաւորի պօռալ: Կուտրձուլին մօրաքոյրը՝ աղջկան
 պօռալու ձայնէն սենեակէն ներս վազելով կ'իմա-
 նայ եղելութիւնը ու կըսէ.

— Կուտրձուլ, օղլում, կը վայլէ՞ աս ըրածդ,
 հէլէ կեցիր նայինք . . .

— Ա՛խ, մօրաքոյր, . . . կսկիծ ունեցող մար-
 դը կը գիտնայ ըրածը թողածը . . .

Դատարանի մը առջև հայրապանի մը փաս-
 տափանը կըսէր.

— Պարունայք դատաւորք, պաշտպանեալս՝
 յիրաւի իր մայրն ու հայրը սպաննեց, բայց խոր-
 հեցէք որ հիմա որք մնացած է և ըստ այնմ դա-
 տեցէք:

Հայր մը իր զաւակին կըսէր.

— Իէս՛րգ, եղունգներդ կտրեցի՞ք.

— Միւսիւնիս պատուիրեց որ չաբաթ օրե-
 ըր կտրեմ.

— Եղունգ կտրելու համար օր յատկացնելը

ի՞նչ ըսել է .

— Թերեւս կիրակին առանց զիրար ճանկըր-
 տելով անցունելու համար ըլլալու է:

Երիտասարդ մը դաշնամուրին քով կեցած
 տանը օրիորդին կըսէր.

— Ո՛հ, օրիորդ, բան մը պիտի խնդրեմ ձեզ-
 մէ զոր կը յուսամ թէ չէք մերժեր.

— Տեսնենք ի՞նչ է.

— Ձեր սրտին մէջ ինչ տեղ մը շնորհելիդ
 կը խնդրեմ.

— Սիրալո՞ւսը բայց առաջուց ըսեմ որ պի-
 տի նեղուիք, որովհետեւ ես ֆօրսէ կը զօրծա-
 ծեմ:

ԹԻՆԿ ԹՆԿԸ ՎԻՋԸԴ ՍԻԿՈՒՌԻԴԸԴ ԳՍԲ.

Քաքիքայ քո՛ր (2) միջիռն ֆօժքիզմասիռն.

Աշխարհիս էն վար ապահովագրական ընկե-
 րութիւնը.

Ընդդէմ՝ սիրային երջանկութեան, ամուս-
 նական յարկի խաղաղութեան, էրիկը կնիկէն,
 երէցկիւնը տէրտէրէն զատող, ևլն. ևլն.

Մանրամասնութեանց համար դիմել շաքա-
 րուկիւր Պ. X Իշխիւղարեանի.

Տիւմայէլէկ մահալլէսի, Չըլըրթմա ճատ-
 տէսի, Ձուռնա փողոց, թիւ 1356:

ԱՅԻՆԵԻ ԼԵԹԱՅԻՓ

ՊԻՆ, ՊԻՐ ԱՏԷՏ

(ՄԻՒՆՏԵՐԻՃԱԹԸ)

Կիւլտիւրիւճիւ ֆգրալար վէ Հիքեայէլէր. Մալիւմա-
 թը ֆէննիյէ. Լուղաթը Լէթայիֆ. ֆէննի էյլէնճէլէր
 վէ Բէսիմլի Պիլմէճէլէր:


160 սահիֆէտէն իպարկթ օլուպ, բէյտէրբէյ
 նէշր օլուռն մէզքիւր քիթապըն պիրինճի ճիւ-
 տի խիթամ պուլուպ, իտարէխանէմիլտէ սա-
 թըլմագտա աւր Ծիյ 2 ֆրանք:

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (46)

ՌԵՆԷ ՏՐԻՓՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

ՆԱՐԵԿԱՐԻՍՏՈՒՆԵՐ



Սըր Արթուր և Բերքինս այն տանն աղաղակներ արձկեցին որք բացէն իմացուելով, մակոյկներէն մէկը դէպ ի եզերք ուղղուեցաւ: Միւսները իրենց ճամբան կը շարունակէին դէպ ի Էֆրէն, որուն հրդեհը ծանուցած էր Վիթթորիոսի ծովեզրի հետազոտողը:

Անգլիական մակոյկը շատ լաւ թիավարներ ունեւնալով՝ դիւրաւ կրնար մտնել խութերուն մէջ զոր մակընթացութիւնը մասամբ ծածկած էր: Հիմա մէկ արգելք միայն ունէր անցնելու: Սըր Արթուր տիկին Լութերի հետ կը կենար աւազակոյտին վրայ, և նաւապետը որ բոլոր պտղարիւնը գտած էր, մակաժայռի մը գագաթէն իր հայրենակիցներուն կը ցուցնէր տեղն ուր կրնային մօտենալ, երբ Չու իր ետին երեւցաւ՝ դաշոյնը վերուցած:

Ամենեւին չուզելով որ իր թշնամին ձեռքէն խոյս տայ. Կարմիր—Մամուկը մէկ ոստուով անցած էր այն ճեղքուածքէն որ զինքը կը բաժնէր նաւաբեկեալներէն:

Հրամատարն հասկցաւ թէ կորսուած էր, բայց մարդասպանը դեռ ոճիր մըն ալ չգործած, անհետ եղաւ յանկարծ: Բէյ—Հօ անոր վրայ նետուած էր, բռնած էր զայն բազուկներուն մէջ, յետոյ մինչեւ լայն ժայռի մը ծալքի տարած ուսկից կը ջանար ծովը նետել զայն:

Բայց թշուառականը հուժկու էր: Իր առաջին ապշուածիւնն անցնելէ ետք, իր նախադարձակին փաթթուած էր, եւ այս պայքարին տկանատեսները նախկին ծովահէնին օգնելու ժամանակ չունեցած, Չու կորսնցունել տուած էր անոր հաւասարակշռութիւնը և երկուքն ալ անդունդին մէջ գլորուած էին:

Ալիքները գոցուեցան անոնց վրայէն, յետոյ, տալով մէթը հեռուն նորէն երեւցան միշտ փաթթուած, և նորէն անհետ եղան: Հինգ վայրկեաններ անցան. Անգլուհը անշուշտ թատերափայլն էր եղած սոսկալի մենամարտի մը, վասն զի այն պահուն էրք մակոյկը բացը կելլար Բէյ—Հօին ապաստան մը տալու համար:

Սըր Արթուր նշմարեց զայն ու գետին ոտք կը դնէր, բայց անմիջապէս աւազին վրայ կիսնար կը փռուէր:

Այն տանն Բերքինս անոր բով վազեց: Կուրծքին վրայ—հռելի վերք մըն էր բացուած, ուսկից արիւնը ուխտէն կը վազէր:

—Փոխարինուեցանք, նաւապետ, մընջեց նուազուն ձայնով մը. Լատրոն չպիտի առաջնորդեմ ձեզ, բայց Զուրի—Եղեգն ալ պիտ չունի:

Եւ վերջին շունջը փչեց:

Մաքսախոյզն այն մակոյկը տարաւ զայն ուր արգէն կը գտնուէր տիկին Լութեր, բայց առանց երկանը դիակին: Ծովը ծածկած կամ տարած էր զայն:

Քառորդ ժամ ետքը նաւապետն իր երկկայմը կը ցաաբէր: Ծովահէններուն յարձակումը բռնուն էր եղած, բայց Մարթոն արիաբար վանած էր զայն:

Վերջապէս, նրկկայմը կորուին մէջ կորուսած էր իր տասներկու նաւազները, բայց իր կայմին ու կամրջակին վիճակը, հրոյ ճարակ եղած ըլլալով, թոյլ չէր տար որ բացը կենայ: Ուստի Բերքինս որոշեց յաջորդօրը Վիթթորիոս դառնալ:

Սակայն արեւը ծագելուն պէս իր առաջին հոգն եղաւ յամախ ծովեզրն երթալ՝ Պ. Լութերի դիակը փնտրելու համար: Գտաւ զայն երկու ժայռերու մէջտեղ որք բռնած էին եւ կտոր կտոր ըրած. Երկիւղածօրէն վերցունել տուաւ այդ տխուր բեկորները և ցամաք ուղղուեցաւ:

Գալով Չուի մարմինն, անհետ եղած էր:

Անգլուհը պահած էր իր որսը:

Ը.

Մինչ երկու անմեղներ մահուան կը պատրաստուին

Երբ Հոնկ—Բոնկի կառավարիչն իմացաւ ծովահէններուն կողմէ անգլիական դրօշին եղած նոր նախատինքը, անմիջապէս որոշեց վերջ տալ իրաց վիճակի մը որ ո՛րքան ստորնացուցիչ էր բրիտանական պատւոյն այնքան փնտասկար էր գաղթականութեան շահերուն:

Նոյն օրն իսկ Բանդոն զրկեց սըր Ուիլեմը Մօրին, իր թիկնապահներէն մէկը, չէ թէ փոխարքայէն խնդրելու համար արշաւանքի մը արտօնութիւնը Լատրոն կղզիներուն վրայ, այլ իմացնելու համար որ զինուորական այս դործողութիւն տեղի պիտի ունենար:

Չինու կառավարութեան օգնութեամբ կամ ոչ, և հը-
րամայեց Խոնձէն և Անհրուսի բրէկադերներու հը-
մատարներուն որ մինչեւ Պրքա—Թիկիս ելլան եւ
պատրաստ ըլլան ճամբան գոցելու, թող չտրուի նաեւ
որ պատերազմական ու եւ է ճորայ գետէն իջնայ:

Սրբ Ուիլիամ այս կարգադրութիւնները պիտի
իմացունէր Վաթուտի պահականաւի հրամանատարին,
որպէս զի առաջին վտանգին կարենայ աջակցութիւն
խնդրել բրէկադերէն:

Յետոյ անցիկոյ ներկայացուցիչը ժողովեց ծովային
սպանները եւ անոնցմէ մէկուն, երկրորդ նաւապետ ճօն
Սթենլէյի յանձնեց կղզիներուն վէճ արշաւանքին
կազմակերպման հոգը: Այս անգամ զիպուածով ցա-
մաք չպիտի ելնուէր հոն, ինչպէս առաջ եղած էր, այն
ատեն երբ ճիշդ տեղեկութիւններ չունէին, այլ պիտի
յարձակէին Վանկ—Մուի վրայ, զոր Բէյ—Հօ նշա-
նակած էր իբրեւ կեդրոն ջուրի—Եղէգին:

Յաջորդ օրը, բոլոր գաղթականութիւնը, զայրա-
գին վիճակի մէջ, ներկայ գտնուեցաւ Պ. Լոթէրին
յուզարկաւորութեանը, որուն կինը գրեթէ խելքը կո-
րուած էր:

Վերջին պարտականութիւնները կատարելէ ետք
բարեկամին նկատմամբ Բերքինս՝ Մէնկ նախագահին
վրայ մտածեց: Խորհեցաւ թէ հարկ էր իմացնել անոր
լաւտի աւագափին վրայ կատարուած տոմը, Չուի
մահուան լուրը որքան ալ սոսկալի ըլլար անոր հա-
մար:

Այն ատեն երկար նամակ մը գրեց, հաւատարմօ-
րէն պօքիով տխուր գէպքերը որոց խառնուած էր ինք
գործակալատունէն մեկնելէն ի վեր, եւ նոյն օրն իսկ
անոր զրկեց զայն ի Հօնան, քանզոն գացող Չինացի
վաճառականի մը ձեռքով:

Իր պատմութիւնը կը վերջացունէր սա տուեցով.

«Այլ անսնէք որ ամեն բան կընեմ խոստումս բո-
նելու համար: Եթէ կարենայի գտնել Լէնկի սպանչին
մարմինը, ձեզ պիտի զրկէի, իսկ ծովը պահեց զայն:

«Սակայն կը հաւատամ որ, հակառակ այն անհը-
նարութեան ուր կը գտնուիք Չուն իրեն յանձնելու,
փոխարքան ետ պիտի առնէ իր որոշումը եւ ազատ պի-
տի պահէ ձեզ այն ստորնացուցիչ տանջանքէն որով ըս-
պաննաց ձեզ ձեր եռանդն արծարծելու նպատակով
միայն:

«Ամենէն աւելի կը ցաւիմ դատապարտեալներուն
վրայ, դժբաղտ մանկամարդ կնոջ վրայ զոր կուզէի ա-
զատել: Ստոյգ է թէ քոնկ իշխանը չտարակուսիր ա-

նոնց անմեղութեանը վրայ: Բայց կը վախցուի որ չի-հա-
մարձակիր իր վրայ առնել անոնց կեանքը շնորհելու պա-
տասխանատուութիւնը, երբ պատժի գործադրութեան
հրամանը զայ Բերքինէն:

«Գալով նոր անհամաձայնութեան որ ծագելու մօտ
կ'երեւայ Չին կառավարութեան և անգլիական գաղթա-
կանութեան միջև, անոր առաջն առնելու համար կը
բաւէ որ փոխարքան հաւանի Լատրոններուն վրայ մեր
արշաւանքին: Եթէ ըսուածին չափ լաւ քաղաքագէտ է,
պիտի հասկնայ որ թէ՛ իր և թէ՛ մեր գործերը կարգա-
դրուելու են:

Ուստի դեռ կը փափագիմ յուսալ թէ շատ քիչ
օրուան մէջ պիտի կրնամ ձեռուրնիդ սեղմել և ձեր
տունը ճաշակել, բարեկամս, այն համբաւաւոր կարկան-
դակներէն զորս այնքան լաւ կը պատրաստէ ձեր խոհա-
րարը:

«Չեզ անձնուէր

ԲԵՐՔԻՆՍ»

(Շար.)

Ծ Ա Խ Ո Ի Գ Ի Ր Ք Ե Ր

Հետեւեալ գիրքերը մեր խմբագրատան մէջ
կը ծախուին:

Լուսինեան, Իշխան — Ճրանսահայ Բառարան
դին 25 ֆր. ոսկեդրամ. Պուլկարահայ վարժա-
րանաց համար 20 ֆրանք:

Թ. Գ. Հինտլեան — Տեւական և գործնական
Գերականութիւն Պուլկարերէն լեզուի 1 ֆր.

Ե. Մուրատեան — Քննական պատմութիւն
Արշակ Բ. ի և անոր Պապ որդւոյն. 2 ոսկէս ֆր.

Շէյքսբիրի Համլէթը, ողբերգ. 2 50 ֆր.
Թրթուումներ (ոտանաւոր) 25 սնդ.

Հովասուն " " 25 " "

Արտասուածոր " " 20 " "

Թապալաքեար Փիլիկ աղբօր հարսնիքը 60 սնդ.

Բարեկենդանի անկուտիները, կատակախաղ 1
արար 50 սնդ.

Մահճուպիյէթին միւքեաֆաթը, գօմէտի պիր
բէրութ, 50 սնդ.

Գաղանճ գօճա եախօտ էնֆիյէճի, գօմէտի պիր
բէրութ, 50 սնդ.